

# ՊԱՏՄԱ - ԲԱՆԱԳԻՐԱԿԱՆ

ԱՆԱ ԱՐԵՎԱՏՅԱՆ  
Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

## ՍԱՐԱԿ ԴԱՐՁԵՎԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՈՐՊԵՍ Ե ԴԱՐԻ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՇՏՈՆԵՐԳՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Դորս՝ ակադեմիկոս Սին Արևշաղյանի  
75-ամյակի առթիվ

Մատենագրական և մշակութային ժառանգության հայացման լայն շարժումը և դարում մեկնողական, ջատագովական, հայրաբանական, պատմագիտական և վկայաբանական գրականության հետ մեկտեղ ընդգրկել էր նաև կամոնագրությունը և պաշտոնագրությունը: Այսուրենի ստեղծումից և թարգմանական եռանդուն գործունեությունից զատ Մեսրոպ Մաշտոցը և Սահմակ Պարթևն իրենց աշակերտների օգնությամբ անմիջական մասնակցություն բերեցին պաշտոներգության ձևավորմանն ու հայացմանը, որը մինչ այդ տարվում էր հունարեն և ասորերեն: Դեռևս Ե. դ. 20-30-ական թթ. հայերեն թարգմանվեցին Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուտոնցու, Գրիգոր Նազիանզացու, Կյուրեղ Երուսաղեմացու, Եփրեմ Ասորու և վաղ քրիստոնեության երևելի այլ հեղինակների ճառերը, աղոյք-Ընդուն ու քարոզները, Կցուրդները և այլ հոգևոր երգեր: Դրանց զուգահեռ ստեղծվում էին ինքնուրույն նմանատիպ երկեր, որոնք սկզբանվորեցին ազգային դպրության ուսկեղարյան վերեւը:

Հայ երաժշտական միջնադարագիտության տեսանկյունից դեռևս չեն լուսաբանվել Սահմակ Պարթևնի հեղինակած Եկեղեցական Կանոնները<sup>1</sup>, որոնք կարևոր պատմական վավերագիր են նաև Հայ Եկեղեցու պաշտոներգության ուսումնասիրման համար՝ առընչվելով մեր մյուս երաժշտա-ծիսական մատյանների հայացման և կազմավորման գործնարացին: Այդ Կանոնները պատկերացում են տալիս թարգմանչաց ժամանակաշրջանի մի շարք իրողությունների և տակավին խմբումներ ապրող հայոց ծիսակարգի վերաբերյալ:

Տվյալ Կանոնների համադրությունը և դարի մեր պատմիչների երկասիրությունների և այլ վավերագրերի հետ հստակեցնում է ուկեղարյան հայ հրականությանն առնչվող և այդ ժամանակի հասարակությանը հուզող երևույթների, այդ թվում՝ պաշտոներգությանն առաջարկող պահանջները Եկեղեցու հովանականի կողմից:

Կանոններն աչքի են ընկառու շրջանացությամբ, լայն աստվածաբանական գիտապաշարով: Օրենսգործին հատուկ խիստ շարադրանքը շնչում է իմաստությամբ և քարությամբ, սկզբուն նախանձախմնդրությամբ արծարծվող հարցերի նկատմամբ:

<sup>1</sup> Տե՛ս Կանոնագիրը Հայոց, Բն. Ա, աշխատահրությամբ Վազգեն Հակոբյանի, Երևան, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի հրատ., 1964, էջ 368-379:

Ինչպես նշված է ԽԴ հոդվածում «Այս սահմանադրութիւն կարգաց գրեցաւ հրամանաւ երանելույն Սահմակայ մեծ Հայրապետի Հայաստան աշխարհի, ընկալեալ ի քաջ հա- հատակէն՝ ի տեսողեն Գրիգորէ՝ թարգմանեցաւ միայն յունէ ի համ»:

Կանոնների մի շարք պարբերություններ վերաբերում են ժամագրքի, Պատարագամա- տուցի, «Մաշտոց» ծիստանի և Տոնացուցի կազմակորմանը:

Անդրադառնալով Սահմոսարանի կիրառությանը, որը կազմում էր ժամագրքի ատադը, և որի հայացմանը մեծ նպաստ բերեց Բենց ինքը՝ Սահմակ Պարթևը, իր հեղինակած գի- շերային ժամի չորս երգեցիկ քարոզմերով և նրանց կից աղոթքներով<sup>2</sup> (որոնցով փաստո- րնեն հիմք է դրվում հայոց հնագույն Սահմոսարան-Ժամագրքի ինքնուրուցն ազգային նկա- րագրի ձևավորմանը), մեծ Հայրապետը գրել է. «Եւ պաշտօն սահմոսերգութեանն անխա- փան լիցի ի տուրնչեան եւ ի գիշերի, ըստ արինակի մայրաքաղաքացի<sup>3</sup> հարդ հովուապե- տի. զի ամենայն ումեք չէ արէն եւ իշխանութիւն յապահել զայն կարգ պաշտաման, կամ նորաձեւութիւնն ինչ առնել, այլ միշտ ի նմին յարամնալը»<sup>4</sup>: Կամ՝ «Զամառն զլսաւոր քահա- նայն համապազորդեալ յեկեղեցուն կացցէ, և այլ ընկերքն շարաթուր առ նմա փոխանա- կաւ կացցեն, զի պաշտամունքն տուրնչեան եւ գիշերոյ մի՛ խափանեսցին, վասն զի այդ է գործ մշակութեան եւ նոյն պատի»<sup>5</sup>: «Քահանալք միարան կատարեսցեն զայտաման, եւ զպատարագ ազապացն առանց Աւետարան կարդալոյ մի՛ իշխանեցեն քահանալք մատու- ցանել»<sup>6</sup>:

ԼԲ զլուխն անդրադառնում է ծիսակարգի և տոնակարգի այլևայլ հարցերին, այսպես. «Զպտուղ զնախնեաց կարգեալս՝ եւ զամենայն ընծայս ուխտից զԶատկաց եւ ագապաց եւ զայլոց տաւմից՝ ծողովրդականք սիրով եւ լրջմտութեամբ հատուցեն յեկեղեցին, որ- պէս արէն է. զոգույ եւ զմարմնոյ պատճառ կենդանութեան մի արգելեալ խափանեսցեն եւ խափանեսցին ի կենդանեաց ոգուց: Խսկ եթէ ոք կամակարութեամբ ապստամբեալ յիր- մէ քահանայէն և ի վանաց՝ արտաքոյ իրոյ եկեղեցույն ի վանս ուրեք կամ յանապատս զպտուղ եւ զպատարագ մասուցէ՝ այնպիսին ինքն եւ ընդունաւորն ինեհի լիցին յարինութենէն և ի հաղորդութենէ ընկերաց հանդերձ ընտանեաթ, մինչեւ ապաշխարեսց եւ տուժեսցի յեկեղեցոյ, վասն զի եղեւ պատուիրանազանց եւ աստուածամարտ»:

<sup>2</sup> Այդ մասին մանրամասն տեսն մեր հոդվածը՝ Քարոզի ժանրը Բայց հոգևոր երգատեղության մէջ, «Պատ- մա-քանակիրական համեմատ», 1992, թիվ 1-2: Նույն Ֆրանսերեն՝ A. S. Arevchatian, La Proclamasion melodisee dans le Chant Sacre Armenien, "Revue des Etudes Armeniennes", 24, 1993.

<sup>3</sup> Մայրաքաղաքը եզրի կապակցությամբ տեսն Պ. Մուրախյան, Բնագրագիտական դիտարկումներ Խորենա- ցու Պատմության ներինակային խսկագի վերականգնման ուղղությամբ («Հայկազյան Հայրաքիտական Հան- դես», ԻԱ, 2001, էջ 81), որ պատեղ է, որ «ապատեղ խոսքը ճիշտ խորենացու հիշատակած սպոտեների (ակմիե- ների) ամսինքների» միարամությամբ վանք-մայրաքաղաքի հովվապես ճիշտ մասին է: Սպոտեները նույն ակմեն- ներն են, որոնց կարգին է դասում Կորյունը իր ուսուցչին՝ Մաշտոցին. «Պատի եւ հրաման եղանէր՝ վայելու մե- ծածրածօք զՍուրբը» Ակումիտ անուն կոչելոյ»), տեսն Կորյուն, Վարդ Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական ալլ ըն- թերցվածներով, թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները Մ. Արենյանի, Երևան, Հայպետ- հրատակություն, 1941, էջ 64-65:

<sup>4</sup> Կանոնը, Գ:

<sup>5</sup> Կանոնը, ԺԵ:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 383:

Իսկ ԼԳ գլուխում խոսքը ժողովրդի մեջ հնուց ի վեր հաստատված և տարածված սովորութեանի մասին է, որոնք մշտական ուղենկցվում էին նաև ողբերգորդ։ «Գինի ըմպելիս ի լալիս մի արածեն, աշխար ի վերայ մեռելոյ մի՝ ոք առցէ, քանզի դիական են ամենայն այնպիսի իրք. ապա եթէ իցէ ոք եւ անհնազանդեալ արացեն՝ պարտական եղիցին ապաշխարութեան առ դուրս սուրբ եկեղեցւոյն»։ Իր տեսլականին համապատասխան հորդորում է Հայուապետու ԼԾ հորվածում։ «Ցիշեցուցանեմ եւ ձեզ կրամասէր վանականաց ամենեցուն. վասն զի հրաժարեալ էք ի կենաց երկրատրաց, եւ պարապեալ Աստուծոյ եւ աստուծավանցն, զի նմանեսցէ անուանդ խոստվանութեան եւ գործք. եւ եղիցի ձեզ սիրելի՝ պարկենչութիւն, արթնութիւն, պաշտամահրութիւն, նմանութիւն բերել յանձննա հրեշտակական վարուց»։

Այստեղ նշելի է, որ նման տեսլականն առնչվում էր նաև եկեղեցական երգեցողությանը, որը համարվում էր երկնքում հրեշտականիր՝ Տիրոջ մշտնչենական փառարանության և օրիներգության ընդորիմակումը՝ ըստ Եզեկիել մարգարեի տեսիլքի։ «Սուրբ, սուրբ, Տէր զարութեանց...»։ Այդ տեսլականը ծննեց Աստուծոն փառքը, լուսը գովերգող մի ողջ գեղագիտական ուղղություն համաքրիստոնեական չափանիշներով, որը ստացավ «հրեշտականան, գեղեցկանան երգեցողութիւն» անվանումը։ Դրա լավագույն դրսնորումը ակնհայտ է Հայոց Պատարագի հոգեզմայլ սրբախոսություններում, իսկ հետագայում նաև Մանրուաման արվեստում։

ԼԶ հորվածում Սահակ Պարթև կաթողիկոսը հարցնում է. «Ճեսանե՞ս զյարմարումն եւ զբարձրութիւն եկեղեցւոյ. զուրբ եւ զամբիծ հաւատոյն ասեմ, որոյ առաքեալը եւ մարգարէ եւ վարդապետը են նաւազարք, ունեղով նաւապետ զմարմնացեալ եւ զմարդացեալ բանն Աստուծ. եւ զնա իսկապէս խոստվանիմք ասել մայր եկեղեցւի ի Քրիստոս հաւատացելոց, քանզի զարդէն նաև զամենեսեան յինքն սմիկովելով ցամաքարեն յամենայն աշխարհական ծիփանաց կարող լինի ապրեցուցանել. բայց միայն աներկեսեան պահեսցուք գիտատու»։

Խիստ ուշագրավ է, որ այս հաստվածում առկա է Մաշտոցի Ապաշխարության և Ավագ շաբաթվա կցուրդ-շարականներում լայնորեն կիրառված բառապաշարը. ինչպես, օրինակ՝ «վարդապետը են նաւազարք, ունեղով նաւապետ զմարմնացեալ եւ զմարդացեալ բանն Աստուծ» կամ «քանզի զարդէն նաև զամենեսեան յինքն ամփոփելով ցամաքարեն յամենայն աշխարհական ծիփանաց կարող լինի ապրեցուցանել» և այլն։ Հիշեցնեմք, որ պատմական ավանդություն և մատենագրական աղբյուրները Սահակ Պարթևին են ընծայում Մահկազարդի և Ավագ շաբաթվա կցուրդ-շարականների երածշտա-բանաստեղծական մտահղացումն ու հորինումը։ Տվյալ հաստվածում կիրառված բառապաշարը և կերպարային համակարգը կարող է լրացուցիչ կովաճ հանդիսանալ այդ տեղեկությունները հավաստի համարելու օգտին։

Այնութեևն շարունակում է Հայրապետու. «Եւ յիրափ, մանաւանդ թէ ճշմարիտ իսկ, զի ոչ են բաւական անձայնաւոր կամ անշունչ արարածք յայտնել զխորհուրդ աստուծապաշտութեան, այլ միայն բանաւոր եկեղեցիս։ Վասն այսորիկ եւ սաղմոսն բարձրաձայն գոչէ, թէ «Արքնութիւն նմա յեկեղեցիս սրբոց»։ Ամա եւ Սամուել մարգարէ որ հա-

ատարիմն կոչեցաւ՝ զնոյն ուսուցանէր ի պատուիրելն իրում Սատողաւ. «Իբրև գնացես յի՛՛ հանդիպեսցիս եկեղեցւոյ՝ պարու մարգարէից մարգարէացելոց»:

Այնուեւսու դրսուրվում է Սահակ Պարթևի աստվածարանական խորն իմացությունն ու հմտությունը, ճարտասանական իր ող Վարպետությամբ, իրու քարոզչի. «Տեսանես, զի ոչ եթէ զխորանն կոչէ եկեղեցի, յորում կայր արկղն կտակարանաց, եւ միւս խորանն, որ կոչէր սրբութիւն, այլ զհաւատացեալ ժողովուրդն աւետարաննէ: Վասն այնորիկ եւս առանկ բարձրագոյն եւ առաքեալն Պատու նորագոյնս իմն եւ յաւետ հրաշալիս, քանզի ցուցանէ զեկեղեցի անդրանկաց գրելոց ոչ յերկորի, այլ յերկինս, որոց անուանք գրեալ են ի դպրութեան կենաց: Տեսէ՞՞ զջմարիտ հիմն եկեղեցւոյ, վասն որոյ Փրկիչն ասաց խնդալ զառաքեալսն, թէ: «Խնդացէ՞ք զի անուանք ձեր գրեալ են ի դպրութեան կենաց» եւ զանապական, որոյ սկիզբն կալաւ շինելոյ յերկորի, որ անցանելոց է, եւ աւարտեցաւ ի կատարս երկնից բարձրութեան»:

Լէ հոդվածի բովանդակությունը վերաբերում է եկեղեցու խորիրդին և նպատակին. «...զի՞ն է եկեղեցի: Այլ ոչ եթէ արհամարին ինչ ուսուցանեմք զշինուածովք պատուեալ զտեղիսն, որ անուանին ժողովուրդանոցք, քանզի ի նոսա ժողովին քահանայք ու մանկունք ուստի եւ պաշտամեայք Աստուծոյ՝ կատարել զաղաթս եւ զխնդրուածս, վասն որոյ եւ աղաւարանք կոշին եւ սրբարանք. եւ հաստատեալ կայ ի նոսա Տէրունական սեղանն, յորոյ վերայ զհացն եւ զգինին պատարագեմք, յարինակ կենդանարար մարմնոյ եւ արեանն Քրիստոսի, որ միշտ անծախապէս բաշխի ի մեզ ի քատութիւն եւ ի թողութիւն մեղաց. եւ ի նոսա կայ ուղղեալ աւազան մկրտութեան, որով լուսաւորեալք վերստին ծննդեամբ եւ Հոգուկն Սրբով, դրոշմիմք ի յոյս կենացն յախտենականաց. եւ հանապազ անդր գումարելով՝ լսեմք սաղմուսերգութիւնս եւ զպատգամս պատուիրանացն Աստուծոյ»:

Խ գոյխն ամբողջությամբ նվիրված է Վ. Դ. Հայոց Եկեղեցու կողմից կանոնակարգված տոներին՝ դառնալով քննվող վավերագրի կարևորագույն մասերից մեկը. «Տան սրբոյն թովիաննու Մկրտչի եւ վկայի, զոր նախակարգեաց առաքեալն եւ խոստվանողն Քրիստոսի եւ հայր վերստին նորոգման բոլոր Հայաստան աշխարհին Գրիգորիոս՝ ի վասն, զի ուստադրութեան պահաւած հաստատեցաւ: (...) Եւ տան ամենայն մարտիրոսաց զոր մատուն կոչեմք: Վարդավառին մատաղենիքն միայն պտուղ յամենայն արմտեաց քոռ քոռ ի ժողովրդականաց և յամուսնացելոց քահանայիցն յառաջին արմտեացն, այսինքն յընտրոցն, զի զեղծցին կայք ցորենոյ եւ հնձանք գինոյ եւ յիտոյ: (...) Տան սրբոյ թալտնութեանն, եւ քառասնորդը նորա, եւ Տեառնընդառաջն, եւ Առաջաւոր պահոցն կատարումն: Տան միջնոց քառասներորդացն Զատկին, այր Ղազարու, մեծ Բինգարաթի Զատկին, յորում Կենարարն մեր աւանդեաց աշակերտացն զխորիուրդն նորոյ ուստիս: Երկուշաբթի Զատկին ընծալից եւ հանդիպատար ամժուիք դիր Զատկին, տան Ամբառնալոյ Տեառն յերկինս, տան Վախճանելոցն յելս հրոտից ամսոյ:» Ծարունակում է կաթողիկոսը. «Խսկ ամուսնացելոց քահանայիցն եղիցին տամք շաբաթն՝ Զատկին, եւ Զատիկն ստիք, եւ երկրորդ Զատիկն եւ յերկրորդ Զատիկն ի վեր կիրակէքն ամենայն եւ Պեճտեկոստն եւ տան սրբոյ Աստուածածնին եւ Վարդեկենդանին եւ Ողոգոմեանն ու ուստի մեծ, որ թարգմանի բարեբանեալ ալր» (Կանոն ԽԳ):

Մեր կարծիքով, այստեղ արծարծվող Ավագ շաբաթվանից մինչև Հոգեգպուտն ընկած ուժ կիրակիների հիշատակությունը պատահական չէ: Խորքում կարծես, երևակվում կած ուժ կիրակիների հիշատակությունը պատահական չէ: Խորքում կարծես, երևակվում կած ուժ կիրակիների հիշատակությունը Վ դարում ավանդական եղանակ-է Հայ Եկեղեցու Ութձայն համակարգի կիրառությունը Վ դարում ավանդական եղանակ-է Հայ Եկեղեցու Ութձայն համակարգի կիրառությունը «Հայսմավորքի» Սրբոց թարգմանչաց ների միասնությունը, որի առաջին կարգավորումը «Հայսմավորքի» Սրբոց թարգմանչաց նվիրված ընթերցվածք վերագրում է Սահակ Պարթև Կաթողիկոսին, այսպես. «...արարին Ավիրված ընթերցվածք վերագրում է Սահակ Պարթև Կաթողիկոսին, այսպես. «...արարին Երգ շաբաթանաց եւ եղանակն, զոր բաժանեաց ի միմեանս հոգելի տէր Խարակ Պարթև»:

Այս հոդվածում հիշատակված սուները սերտորեն առնչվում են նաև «Մաշտոց» ծիսարամին, մասմավորապես՝ Օրինութենաբեր ցուցակ կոչվող հիշատակարան-վավերագրին, որը նույնապես արձանագրվել է Սուրբ Սահակի հրամանով<sup>7</sup>: Տվյալ ցուցակի բովանդակությունը թույլ է տալիս որոշակի պատսկերացում կազմելու հայոց ծիսարանի ձևավորման սկզբնական փուլի մասին: Ուստի մեջբերենք այն ամբողջությամբ. «Կարգաւորութիւն աւրինութիւնաբեր ցուցակի, որ ունի յինքեան օգամանակ հրաբանչիր կարգեալ կանոնացդ զուելիս» թէ ո՞վ ոք, կամ յորմէ գաւառէ, զիայրապետուց ժամանակի նշանակեցից՝ թէ ով երեր ի Հայոց աշխարհն եւ որոց հրամանաւ կարգեալ ճառեցին:

Յետք ծժԱ. ամի սրբոյն Գրիգորի Եղելու թարգմանութիւն [Սուրբ Գրոց] հայերէն լեզուին երանելին Մովսէս, գրիչ սրբոյն Սահակայ, որդոյ սրբոյն Ներսիսի ի Գ ամի թարգմանութեան Մեսրոպայ՝ առաքեաց սուրբն. Սահակ ի Նազիանզ յաթոռ [Գրիգորի] Սատուածարամի. եւ ետ բներել զՍերմարդնեքը՝ զԿալի եւ զՀնձանի, զոր արարեալ էր [Գրիգորի] Սատուածարամի ի Ե երորդ ամի հայրապետութեան հիրոյ: Իսկ զկանոն չուր աւրինելոյն, զոր արարեալ է սրբոյն Բարսղի ի Ե երորդ ամի հայրապետութեան հիրոյ ի Կեսարիա Կապուտկացոց քաղաքի, ի Ենորուադէմ հանդիպեցաւ Խոսրով թարգմանիչ՝ հրամանաւ սրբոյն Սահակայ եւ ամսի գրեաց եւ երեր ի Հայս:

Իսկ զԱպաշխարող կարգել եւ արձակել ի մեծի հինգաշաբաթուշն, երանելոյն Կիւրդի Երուատիմացոյ, գրեալ ի ԻԱ. ամի հայրապետութեան հիրոյ ի դուռն սրբոյն Սիոնի, յաւոր յորում ընծայեցուցանելու զեղովմալեցին Աստուծոյ: Ընծակ եւ Կորիին թարգմանիչը բնրին ի Հայս: Իսկ զՄայր արթէք՛ սրբոյն Կիւրդի հանու կարքեղունացույն է արարեալ, որ եւ սուրբ Յուատիանէ արար մայր կանանց վանաց (...): Ի Գ ամի սրբոյն Սահակայ մինչեւ ԺԴ ամ նորին կատարեցին ի փառս Աստուծոյ: Իսկ սքեմ արթէք՛ (ա). Թէոդորոս եպիսկոպոս Պամիկիայ քաղաքի՝ Բրամանաւ սրբոյն Անտոնին արարեալ. բ՝ Թերաբեցոց սուրբ հաւատ Ամոնի, Գ՝ [ի] Սկիլթացոց սրբոց լերինն: Իսկ վասն գրակարդացոց, եւ կիսասարկաւագաց, եւ Ակարեալ Եկեղեցոյ, եւ յետոյ՝ դուռն Եկեղեցոյ դնել, եւ զնշխարս սրբոց ի համգիստ փոխել, այս իշատակ սրբոյն Գրիգորի է մեզ: Իսկ զԲահանաօրինեան Սրբոյն Սահակայ գծեալ ետ ԻԱ. ամի արքեպիսկոպութեան հիրոյ, ի Զաւասարդի ամսոյ, որ աւր մի՛ էր: Եւ ի Քահանայաթաղն այլ յաւել է՝ [ընթերցուածն] լլաւետարան[է]: Նոյնպէս [արար] եւ զԱշխարհաթաղն ի քաղաքու դաշտի, ի Վկայարան սրբոց Հոփիսիմեանցն: Եւ

<sup>7</sup> Տես Ա. Արևշատյան, «Մաշտոց» ժողովածում որպես Հայ միջնադարյան Երաշտական Մշակույթի Հուշարձան, Երևան, Հայաստանի Գյուղատնտերի Ակադեմիայի հրատարակչություն, 1991, էջ 19-21, ուր գտնելի ենք Օրինութենաբեր ցուցակի բնական բնագիրը՝ կազմված Երևանի Մաշտոցյան Մատենադարանի թիվ 142, 179, 341, 577, 580, 582, 603, 744, 958, 1114, 1898, 2335, 2543, 2607, 3651, 4207 ձեռագրերի:

յետ սրբոյն Գրիգորի ԾԺԱ, ամի մինչեւ ցայն վայր՝ հնովն վարէին: Արար սուրբ Սահակ եւ զԴ քարոզմ զգիշերոյ և զնոցին աղալթսն:

Իսկ զՀիմնարկէք ու զԵկեղեցւ արհմնեք, և զՄըրել տաճարի, և ժամահարի, և սկի և մաղզմայի, և հանդերձի սպասու և աւազան և Մկրտութիւն առնել, և Խաչ արհմնել և Պատկ դնել, և պահոց քարոզմ և աղալթսն, զայդ Մանդակունի է արարեալ, որ ԺԴ թիւ էր ի սրբոյն Գրիգորէ մինչեւ ցսա»<sup>8</sup>:

Ցուցակի մյուս խմբագրությունն այսպէս է ավարտվում. «Օարադրութիւն կարգաւորութեան սք. ցուցակին, զոր մակարդեալ սք. հաւրն Մաշտոցի ի պայծառութիւն սրբոյ Եկեղեցւ, և ի պարծան մամնաց նորին, ի դաստիարակութիւն նոցա և յուսումն. և ի յաստատութիւն հաւատացելոց Ս. Երրորդութեան: Այս ամենայն ի հրամանէ սրբոյն Սահակայ Պարթեաի ձեռամբ Մովսէսի գրչի, նորոգեցաւ ի Հայք, ի փառ Աստուծոյ»<sup>9</sup>:

Ակնհայտ է խնդրո առարկա Կանոնների և Օրինութեանաբեր ցուցակի միջևն եղած կապը: Վերջինս բավական մանրամասն տեղեկություններ է հաղորդում Սուրբ Սահակի լայնածավալ գործունեության մասին, որն ուղղված էր նախևառաջ Հայ Առաքելական Եկեղեցու ծիսակարգի ու պաշտոններգործության կարգավորմանն ու բարեկավմանը:

Իսկ ի՞նչ կնշանակեր Զվիրվել կանոնագրությանը: Դա նշանակում է՝ տարբեր ծիսական կանոնների նաև երաժշտական ձևավորման մասին հոգալը և համապատասխան երգասացություններ հետինակել-հնչեցնելը: Պատահական չէ, որ երկու վավերագրերում էլ հիշատակված են Ավագ շաբաթվա, մասնավորապես՝ Ղազարու հարության (Կանոնը), Ավագ հինգշաբթի օրերը (Կանոնը և Օրինությունաբեր ցուցակ), Տոն Վախճաննելոց, այսինքն՝ մեռնելոց (Կանոնը և Օրինությունաբեր ցուցակ), գիշերային ժամի չորս քարոզներն իրենց աղոթքներով (Օրինությունաբեր ցուցակ) և այլն:

Այս համատեքստում Սահակ Պարթև Կաթողիկոսը մեր առջև հառնում է իբրև վիթխարի մի անձ՝ Եկեղեցական խոշոր գործիչ, հայրապետ, ազգային գործ և դպրության ստեղծողներից մեկը, աստվածաբան, ծիսագետ, նաև՝ Մեսարու Մաշտոցի հետ միասին ազգային շարականներգործության հիմնադիր: Նրա Անդրդրումը Հայ Առաքելական Եկեղեցու պաշտոններգործության ձևավորման մեջ դժվար է գերագնահատել:

<sup>8</sup> Նովմ տեղում, էջ 19-21:

<sup>9</sup> Նովմ տեղում, էջ 21: